26-ՐԴ ՆԻՍՏ

15 հոկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժամը 7[30]-ին. նախագահում է *Ա. Սահակյանը*. մինիստրական օթյակում են մինիստր նախագահը, ներքին գործոց և իրավարարության մինիստրները. դահլիճը լեփ լեցուն է հասարակությամբ: Ներկա է և Օսմանյան կայսրության Հայաստանի ներկայացուցիչ Մահմեդ Ալի փաշան:

Նախագահը կարդում է օրակարգը՝

1. Օրինագիծ դատաստանական վճիռների հայտարարման ձևի մասին.
2. Դիլիջանի շրջանում խոզակաղին և աճարի պտուղ հավաքելու օրինագիծ- Ա ընթերցում.
3. Ֆինանսական հանձնաժողովի առաջարկությունը կառավարության վարկ բաց անելու մասին.
4. Նախահաշվի մնացորդների ծախսման մասին օրինագիծ- Ա ընթերցում.
5. Մանդատային հանձնաժողովի զեկուցումը պատգամավորների մասին.
6. Հարցումներ և հարցապնդումներ.
7. Ընթացիկ հարցեր:

Գր. Տեր-Խաչատրյան - Կարդում է օրենսդրական հանձնաժողովի զեկուցումը դատաստանական վճիռները հայտարարելու ձևի մասին:

Մինչև հեղափոխությունը Ռուսաստանում բոլոր վճիռները հայտարարում էին կայսեր անունից, հեղափոխությունից հետո, Կերենսկու օրոք, որոշվեց հայտարարել ժամանակավոր կառավարության անունից, այժմ Հայաստանի իրավարարության մինիստրը մտցրել է մի օրինագիծ, ըստ որի մեր պետության մեջ բոլոր վճիռները պիտի հայտարարել հանուն Հայաստանի Հանրապետության:

Գ. Ենգիբարյան - Ժող. կուս. ֆրակցիայի կողմից առաջարկվում է «Հանուն Հայաստանի Հանրապետության» փոխարեն դնել «Հանուն Խորհրդարանի»:

Հ. Ազատյան - Սոց. դեմ. ֆրակցիայի կողմից առաջարկում է ուղղում մտցնել այս ձևով. «Հանուն օրենքի»:

Ա. Խոնդկարյան - Մինիստրի առաջարկած ձևը սխալ համարելով, առաջարկում է ընդունել սոց. դեմ. ֆրակցիայի առաջարկությունը, միայն հետևյալ ձևով. «Հանուն Հայաստանում գործող օրենքների»:

Հ. Բուդաղյան - Առարկելով ֆրակցիաների առաջարկություններին, դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է ընդունել մինիստրի առաջարկած ձևը որպես հարմարագույնը:

Իրավ[արարության] մինիստր - Պատճառաբանում և հիմնավորում է իր առաջարկած ձևը:

Այնուհետև *Ղարաջյանը, Ենգիբարյանը, Զուբյանը, Բուդաղյանը* շարունակում են վիճաբանությունները և յուրաքանչյուրն աշխատում է հիմնավորել ու ապացուցել իր ֆրակցիայի առաջարկության հարմարավոր ու իրավաբանորեն ուղիղ լինելը:

Ա. Մելիքյան (սոց. դեմ. մեծամաս.) - Նպատակահարմար է համարում ընդունել «Հանուն Հայաստանի Հանրապետության» ձևը:

Ս. Մամիկոնյան - Համաձայն է ժող. կուս. ֆրակցիայի առաջարկած ձևին:

Ա. Խոնդկարյան - Ըստ կարգի ձայն է վերցնում և առաջարկում խորհրդարանի այսօրվա նիստին մասնակցող նոր պատգամավորների մանդատները ստուգել, թե արդյոք նոքա մասնակցելու՞ են քվեարկություններին, թե՞ ոչ:

Հ. Ազատյան - Հարցնում է, կա՞ն, արդյոք, հեռացողների հրաժարականներ և նոր եկողների մանդատներ նախագահության մոտ:

Հ. Սարգսյան - Զարմանք է հայտնում, որ մի հարց քննելու միջոցին, երբ դեռ չէ լուծված, մարդիկ բոլորովին կողմնակի հարցով ընդհատում են աշխատանքը:

Նախագահ - Բացատրեց, որ նման երևույթը խորհրդարանում սովորություն է դարձած, այդ պատճառով էլ հարմար չի գտնում խնդիրների քննությունը թողնել ու զբաղվել մանր հարցերով. առաջարկում է այդ առթիվ վերացնել վիճաբանությունը. քվեարկությամբ անցնում է:

Քվեարկվում է ապա ընդհատված օրինագիծը և ընդունվում ամբողջությամբ այնպես, ինչպես առաջարկել էր մինիստրությունը:

Ս. Մուշեղյան - Կարդում է Դիլիջանի շրջանի խոզակաղին և աճարի պտուղ հավաքելու օրինագիծը և պաշտպանում ու հիմնավորում նրանով, որ խոզակաղնուց կարելի է պատրաստել սուրճ, կենդանիների ու ձիերի կեր և թռչունների համար կուտ, աճարից՝ յուղ և, եթե չհաջողվի յուղ ստանալ, կարելի է բովել ու տալ գաղթականության որպես աղանձ:

Համաձայն առաջարկված նախահաշվի, պիտի հիշյալ պտուղներից յուրաքանչյուրից 100.000-ական փ. հավաքել, որի համար նախորոշված ծախք ենթադրվում է 1.300.000 ռ.:

Օրինագծի սկզբունքների դեմ առարկողներ չկան, միայն խոսողները՝ Ս. Տեր-Մարտիրոսյան, Ա. Մելիք-Աղաջանյան, Ղարաջյան, ընդունելով այդ գործը որպես առաջին փորձ, առաջարկում են պահանջված քանակը կիսով չափ պակասեցնել, այսինքն՝ յուրաքանչյուրից 50.000-ական փ. անցկացնել օրինագծի մեջ: Քվեարկությամբ անցնում է:

Անցնում են օրինագծի կետ առ կետ ընթերցմանը, որից հետո քվեարկվում և ընդունվում է այն ձևով, որ յուրաքանչյուրից հավաքվի 50.000-ական փ. և այդ բանի համար բաց անել կառավարության անունով 650.000 ռ. կրեդիտ. օրինագծի վերջին հոդվածը, որ ասում է. «կապալով տալ որոշված քանակից ավելի եղածը, միայն վարձը պահանջել նոտարյալ ձևով»-Ս. Թորոսյանի և Հ. Բուդաղյանի առաջարկությամբ խորհրդարանը դուրս է ձգում իբրև համայնքի շահերին դեմ գնացող մի սկզբունք:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Ֆինանս. հանձնաժողովի կողմից զեկուցում է կառավարությանը վարկ բանալու օրինագիծը և առաջարկում ընդունել այն շտապողաբար: Ընդունվում է:

Կառավարությունը, փող չունենալով իր տրամադրության տակ, խնդրում է բանալ 10 միլիոն ռուբլու կրեդիտ և առաջարկված նախահաշիվները քննել զատզատ:

Հանձնաժողովը, մտնելով կառավարության դրության մեջ, գտնում է անհրաժեշտ տալ կառավարությանը դրամ, սակայն ոչ թե 10 միլիոն, այլ՝ 5 միլ[իոն] ռ. և, բացի այդ, նախահաշիվները յուրաքանչյուր մինիստրի պիտի քննվեն առանձին:

Մինիստր-նախագահ - Կառավարությունը հանձնաժողովի առաջարկը համարում է ընդունելի:

Ֆրակցիաների ներկայացուցիչները խնդրի առթիվ սկսում են վիճաբանություն:

Հ. Սարգսյան և Հ. Բուդաղյան - Առաջարկում են համաձայնել հանձնաժողովի կարծիքին:

Հ. Ազատյան - Դեմ է 5 միլիոն տալուն, առաջարկում է տալ ոչ ավել, քան 30 հազար ռ.:

Դ. Զուբյան - Տալ ոչ ավելի, քան 50.000 ռ.:

Ա. Մելիքյան - Առաջարկում է ֆինանս. հանձնաժողովին քննել 5-6 օրում մինչև այժմ ստացած նախահաշիվները և ներկայացնել խորհրդարանին: Դեմ է սկզբունքով կառավարության նույնիսկ մի կոպեկի կրեդիտ տալուն, սակայն ստեղծվել է մեր համար դրություն, որ ստիպում է համաձայնել կառավարությանը միլիոններ տալու:

Օրինագիծը դրվում է քվեարկության և ընդունվում ամբողջությամբ ու հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Բժ. *Տեր-Հակոբյան* - Հայտարարում է, որ անցյալ նիստին ն. գ. մինիստրը իրավաբանական հիմք ուներ հայտնելու, որ գաղթ[ականական] հիվանդանոցների խնդիրը քննվել է բժշկասանիտարական հանձնաժողովի կողմից, չնայած, որ չի քննվել իրապես:

Եղան մի քանի հարցումներ կառավարության:

Նիստը փակվեց գիշեր[վա] ժ. 12-ին:

«Զանգ», 19 հոկտեմբերի 1918թ.